

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ /ԲԱՎՐԱ, ԲԱԳՐԱՏԱՇԵՆ, ԳՈԳԱՎԱՆ/ՇԵՆՔԵՐՈՒՄ
ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԶԵՌՈՒՑՄԱՆ, ՕԴԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ և ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ և ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/5**

ք.Երևան

«01» ապրիլի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Աղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է /Բավրա, Բագրատաշեն, Գոգավան/շենքերում տեղակայված ջեռուցման, օդակարգավորման և օդափոխության կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / \sqrt{9 \times D \times P}$, որտեղ՝

V_9 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

U_9 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է (48 000 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն).

$\sqrt{9}$ -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է (53 622 580 ՀՀ դրամ).

D -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

P -ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՏԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
3 ՍԻՍ
ԱՅ
ՆՈՒՄ
"ՇՆՎԵՐ"
785
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՏԱԿԱՆԱԿՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7

ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն

Հ/Ը 900011054013

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
գլխավոր քարտուղար

Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Եյչ Վի Եյ Սերվիս» ՍՊԸ
Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան

Արցախի 15 տուն,

«ԷՎՈԿԱԲԱՆ» ՓԲԸ

Հ/Ը 1660015949430100

ՀՎՀՀ 04230785

«Եյչ Վի Եյ Սերվիս» ՍՊԸ-ի
Տնօրեն

Ն. ԱՂԱԶԱՐՅԱՆ

/ստորագրություն/



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ժԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայության				նատուցման	
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50711100/14	<p>Շենքերում տեղակայված ջեռուցման և օդափոխության համակարգի վերանորոգման և պահպանման ծառայություններ</p> <p>Բագրատաշենի մաքսային կետ Տեխնիկական բնութագրի</p> <p>ՆԱՀ1, ՆԱՀ2 և ՆԱՀ3</p> <p>1-ին հարկի կախով առաստաղներում տեղադրված են ներածնան-արտաձնան օդափոխության սարքավորումներ: Թարմ օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերում տեղադրված արտաքին ցանցերի միջոցով: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Սարքավորումները համարված են 2-արագության օդափոխիչներով:</p> <p>Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°</p> <p>Տեղադրված է օդափոխության սարքավորում 4 ներածնան համակարգով:</p> <p>ՆՀ1, ՆՀ2, ՆՀ3 և ՆՀ4</p> <p>1-ին ՆՀ1, ՆՀ2/ և 2-րդ ՆՀ3, ՆՀ4/ հարկի կախով առաստաղներում տեղադրված են օդափոխության ուղղահոս ներածնան սարքավորումներ, որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում</p>	դրամ	15 000 000	1	<ul style="list-style-type: none"> Բագրատաշենի մաքսային կետ Հայաստան, 4104, Տավուշի մարզ. Բագրատաշեն համայնք Բավրայի մաքսային կետ Հայաստան, 2802, Շիրակի մարզ, Բավրա համայնք Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ Հայաստան, 2122, Լոռու մարզ, Գոգավան համայնք 	Ծառայության մատուցումը իրականացվելու է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 210 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ 2021թ. դեկտեմբերի 25-ը

անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ, հանդերձարաններ և չորանոցներ կոմպենսացնելու համար զուգարաններից, լողասենյակներից, արիվիներից հեռացվող օդը, ինչպես նաև հազուստի չորացման համար:

Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է.

ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°

Տեղադրված են օդափոխության համակարգի հետևյալ արտաձևան սարքավորումները.

ԱՀ1 ... ԱՀ22, ԱՀ25, ԱՀ26, ԱՀ28, ԱՀ29 և ԱՀ30

1-ին հարկի սանհանգույցների և լողասենյակների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և հատակի միջև: Օդի արտաձումն իրականացվում է վերին գտուուց օդաբաշխիչների միջով: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:

ԱՀ23, ԱՀ24

2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության խոհանոցային օդափոխիչներ: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և հատակի միջև: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:

Առակա է օդափոխության սարքավորում 3 արտաձևան համակարգով՝ բնական հարկադրումով

ԲԱՀ1, ԲԱՀ2 և ԲԱՀ3

2-րդ հարկի 3 արիվիների սենթերի օդի արտաձումը իրականացվում է 2ենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Սարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ:

Նշված 2ենթերում օդը ներածվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենթերի պատերի ստորին հատվածում:



Ջեռուցում և օդորակում

Շենքի սենքերում ջեռուցում և օդի լավորակում ապահովելու նպատակով տեղադրված է Mitsubishi Electric ընկերության արտադրության VRF բազմագույն համակարգեր CITY MULTI G5: 2-րդ հարկի աստիճանավանդակների, սանհանգույցների, հանդերձարանների, վացքատան և միջանցքների ջեռուցման համար տեղադրված են էլեկտրական կոնվեկտորներ թերմոստատներով:

Սենքերում տեղադրված են առանձին կառավարմանը կասեցտային տիպի օդորակիչներ: Ջերմաստիճանի կարգավորման համար օգտագործվում են պատի ստացիոնար կառավարման վահանակներ: Արտաքին բլոկերը տեղադրված են շենքի տանիքում:

Սերվերային սենյակների համար տեղադրված են առանձին Split -համակարգի օդորակիչներ, որոնց արտաքին բլոկերը նույնպես տեղադրվում են տանիքում: Սերվերների անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է օդորակիչ սարքերի 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է ռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պղնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:

Կաթսայատուն

Առկա է 2 կաթսայատուն՝ տանիքում, որոնք տեղակայված են տանիքի աջ և ձախ մասերում. աջ կողմի կաթսայատանը տեղադրված է պատից կախվող, տուրբո 3 գազի կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32կՎտ հզորությամբ, իսկ ձախ կողմի կաթսայատունը տեղադրված է պատից կախվող, տուրբո 4 գազի կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32կՎտ հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման համակարգով: Կաթսաների աշխատանքային ճնշումը կազմում է 4 բար:

2 կաթսայատներն ապահովում են շենքի տաք ջրամատակարարումը՝ 2 ծավալային ջրատաքացուցիչների միջոցով, որոնք տեղադրված են աջակողմյան կաթսայատանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

և ունեն յուրաքանչյուրը 400լ տարողություն, 36կ-կտ հզորություն, և ձախակողմյան կաթսայատան 2 ձավալային ջրատաքացուցիչների միջոցով՝ յուրաքանչյուրը 500լ տարողությամբ, 43կ-կտ հզորությամբ: Տաք ջրամատակարարում իրականացվում է նաև տեղադրված արևային մարտկոցներից: Ձախակողմյան կաթսայատանը տեղադրված է 1 ջրի բաք՝ 400լ տարողությամբ, 21կ-կտ և 20կ-կտ հզորությամբ, 2 ջերմափոխանակիչով՝ համատեղելու համար արևային ջրատաքացուցիչ մարտկոցների հետ:

Տանիքին տեղադրված է 3 արևային ջրատաքացուցիչ մարտկոց՝ 2.51x2.35 մ² տարածքով: Յուրաքանչյուր կուտակիչ ջրատաքացուցիչի համար առանձին տեղադրված է շրջանառու պոմպ առաջնային կոնտուրով:

Կաթսայատան ջեռուցումը իրականացվում է պանելային ռադիատորներով:

Տաք ջրամատակարարում

Շենքի տաք ջրամատակարարումն իրականացվում է տանիքի աջ և ձախ մասերում տեղադրված կաթսայատներից և արևային կոլեկտորների միջոցով, որոնք նույնպես տեղադրված են տանիքում:

**Բավոյալի մաքսային կետ
Տեխնիկական բնութագիր**

ՆԱՀ1, ՆԱՀ2 և ՆԱՀ3

1-ին հարկի կախովի առաստաղներում տեղադրված են ներածնան-արտածնան օդափոխության սարքավորումներ:

Թարս օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերում տեղադրված արտաքին ցանցերի միջոցով: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով:

Սարքավորումները համալրված են 2-ադազության օդափոխիչներով:

Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է.

ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°

Տեղադրված է օդափոխության սարքավորում 5 ներածնան համակարգով:

ՆՀ1, ՆՀ2, ՆՀ3, ՆՀ4 և ՆՀ5

1-ին (ՆՀ1, ՆՀ2) և 2-րդ (ՆՀ3, ՆՀ4, ՆՀ5) հարկի կախովի առաստաղներում տեղադրված են ուղղահիս ներածնան սարքավորումներ, որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ, հանդերձարաններ և չորանոցներ կոմպենսացելու համար զուգարաններից, լողաննյակներից, արխիվներից հեռացվող օդը, ինչպես նաև հագուստի չորացման համար:

Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°

Տեղադրված են օդափոխության համակարգի հետևյալ արտաձևան սարքավորումները.

ԱՀ1... ԱՀ29

1-ին հարկի սանհանգույցների և լողաննյակների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտածվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է ճեղք դռան և հատակի միջև: Օդի արտաձույն իրականացվում է վերին գոտուց օդաբաշխիչների միջով: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:

ԱՀ30, ԱՀ31 և ԱՀ32

2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության խոհանոցային օդափոխիչներ: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտածվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և հատակի միջև: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:

Առկա է օդափոխության սարքավորում 5 արտաձևան համակարգով՝ բնական հարկադրումով
ԲԱՀ1, ԲԱՀ2, ԲԱՀ3, ԲԱՀ4 և ԲԱՀ5

2-րդ հարկի սպասարկվող տարածքների՝ արխիվների սենթեր (ԲԱՀ1, ԲԱՀ12, ԲԱՀ13), պահեստներ և հավաքարանների սենյակներ (ԲԱՀ4, ԲԱՀ5)

Արտածումը այս սենքերից իրականացվում է շենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Սարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ:

Նշված սենքերում օդը ներածվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենքերի պատերի վերին հատվածում:

Օդը ներածվում է պահեստի և հավաքարարի սենյակներ հատակի և դրան միջև 2.0սմ ճեղքով, իսկ արտածվում տանիքից գլխանոցի տակով:

Օդորակում

Սերվերային սենյակների օդորակման համար տեղադրված Mitsubishi Electric ընկերության արտադրության առանձին split-համակարգի օդորակիչներով, որոնց արտաքին բլոկերը տեղադրվում են տանիքում: Սերվերային սենյակներում անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է օդորակման սարքավորումների 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է ռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պղնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:

Ջեռուցում

Շենքում իրականացված է ջրային տաքացման համակարգ՝ T1/T2 , մեխանիկական շրջանառությամբ և 80-60°C ջրով որպես ջերմակիր:

Շենքի ջեռուցումը իրականացվում է պատից կախովի ավտոմատ, տուրբո գազի կաթսաներով: Շենքի ջերմային բեռը բաժանված է 2 մասի՝

Ջեռուցումն իրականացվում է տանիքում համապատասխանաբար ծախս և աջ մասերում տեղադրված կաթսայատներից:

Տեղադրված են մետաղական պանելային ռադիատորներ՝ մեխանիկական փակող և կարգաբեռող փականներով:

Ձեռնհարկում գտնվող տեխնիկական սենքերում ջեռուցումը իրականացված է էլեկտրական կոնվեկտորներով:

1-ին (ԱՀ1, ԱՀ2) և 2-րդ (ԱՀ3) հարկերի կախովի առաստաղներում տեղադրված են ուղղահոս ներածման սարքավորումներ. որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ և հանդերձարաններ և սենյեր՝ կոմպենսացելու համար զուգարաններից, լողանայակներից, արխիվներից, մեկուսարաններից և հավաքարարների գույքի սենյակներից հեռացվող օդը: Տեղադրված են հետևյալ արտածման համակարգերը՝

ԱՀ1 - ԱՀ11, ԱՀ13 - 22, ԱՀ24 - ԱՀ29

1-ին և 2-րդ հարկի սանհանգույցների և լողանայակների կախովի առաստաղներում, որպես արտածման սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտաձվող օդատարները բարձրացվում են տանիքից 1.0մ բարձր և ավարտվում գլխանոցներով կամ դեֆլեկտորներով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված են ճեղքեր դռան և հատակի միջև (ճեղքի մակերեսը 0.02քմ է): Օդի արտածումն իրականացվում է վերին գոտուց օդաքաշիչների միջով: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի միջոցով:

ԱՀ12 և ԱՀ23

2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտածման սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտաձվող օդատարները բարձրացվում են տանիքից 1.0մ բարձր և ավարտվում գլխանոցներով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված են ճեղքեր դռան և հատակի միջև (ճեղքի տարածքը 0.02քմ է): Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:

Առկա է օդափոխության սարքավորում 5 արտածման համակարգով բնական հարկադրումով

ԲԱՀ1- ԲԱՀ10

1-ին հարկի գտնվող մեկուսարանների տարածքներ (ԲԱՀ1, ԲԱՀ2)

2-րդ հարկում գտնվող արխիվների սենյեր (ԲԱՀ3- ԲԱՀ8)

2-րդ հարկում գտնվող պահեստից (ԲԱՀ9):



2-րդ հարկում գտնվող ՕՎԻՐ-ի ծառայողության ընդունարան (ԲԱ<1010)

Արտածումն այս սենքերից իրականացում է շենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Սարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ:

Նշված սենքերում օդը ներածվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենքերի պատերի ստորին հատվածում:

Սենքերում օդի ջերմաստիճանը սահմանված է՝ ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°

Օդի լավտրակում

Սերվերային սենյակների օդի լավորական համար տեղադրված են առանձին split-համակարգեր, որոնց արտաքին բլոկերը տեղադրվում են տանիքում: Սերվերային սենյակներում անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է split-համակարգերի 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է նաև ոռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պղնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:

Ջեռուցում

Շենքում տեղադրված է երկխողովակ ջրային տաքացման համակարգ՝ T1/T2 , մեխանիկական շրջանառությամբ և 80-60°C ջրով՝ որպես ջեռմակիր:

Շենքի ջեռուցումը իրականացվում է պատից կախովի ավտոմատ, տուրբո գազի կաթսաներով:

Շենքի ջերմային բեռը բաժանված է 4 մասի.

Ջեռուցումն իրականացվում է տանիքում ձախ և աջ մասերում տեղադրված պատից կախվող տուրբո գազի կաթսաներով:

Տեղադրված են մետաղական պանելային ռադիատորներ՝ մեխանիկական փակող և կարգաբերող փականներով:

Տաք ջրամատակարարում

Խսնելու ջրի մատակարարումը իրականացնել մանրաթելային ամրակցումով PP-R երկու ներթող խողովակներով՝ յուրաքանչյուրը Ø75×12.5 չափի: Տաք ջրամատակարարումն

	իրականացվում է զրատաքացուցիչներով, սանհանգույցներում կամ հավաքարարի սենյակում:	էլեկտրական որոնք տեղադրված են	ծավալային			
--	--	-------------------------------	-----------	--	--	--

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել փնել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Հավելված N 1-ի անբաժանելի մաս են համարվում Հավելված N 1.1-ը, Հավելված N 1.2-ը և Հավելված N 1.3-ը:

Հավելված 1.2

ՀՀ ՊԵԿ կարիքների համար գնանշման հարցում ընթացակարգի միջոցով շենքերում տեղակայված ջեռուցման, օդակարգավորման և օդափոխության կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

* Անհրաժեշտ պայմաններ՝

- Կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման ծառայության մեջ ներառվում են հետևյալ գործողությունները՝
 - Համակարգի արտադրողականության չափում
 - Ոչ նորմալ ծայրերի և վիբրացիաների հայտնաբերում և վերացում
 - Լարման գծերի պարամետրների ստուգում և ի հայտ եկած թերությունների շտկում
 - Էլեկտրոնային մասի տեստավորում
 - Արտաքին բյուկների մաքրում /քիմմաքրում/
 - Դրենաժային պոմպերի մաքրում
 - Դրենաժային համակարգերի ստուգում և թերությունների վերացում
 - Կոմպրեսորների ոչ նորմալ ծայրերի և վիբրացիաների հայտնաբերում և վերացում
 - Կոմպրեսորների սնուցման գծի լարումների ստուգում մեկնարկի և աշխատանքի ժամանակ և ի հայտ եկած շեղումների կարգավորում
 - Քառաքայլ փականների աշխատանքի ստուգում և կարգաբերում
 - Ֆրեոնային համակարգերի ֆիլտրերի ստուգում
 - Համակարգերի սարքերի և սարքավորումների շահագործման պայմանների խախտումներ հայտնաբերելու դեպքում խորհրդատվություն դրանց վերացման նպատակով
 - Կաթսայի մաքրում
 - Ընդլայնման բաքի ստուգում, լիցքավորում
 - Պոմպի մաքրում
 - Պահեստամասերի փոխարկում
 - Բազուտաշենի մաքսային կետի օդորոակման համակարգի աշխատանքի հեռահար մոնիտորինգի, դիագնոստիկայի և կառավարման սարքերի միացում, կարգաբերում և սպասարկում:
- Արձագանքման ժամանակը սպասարկման կանչերի դեպքում՝ բացառությամբ այլնային ստուգայցերի. Ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ձեռնարկի համապատասխան գործողություններ Պատվիրատուի կողմից տեղեկատվությունը Ծառայություն Մատուցող ընկերության էլ. փոստի վրա ստանալուց կամ Ծառայություն Մատուցող ընկերությանը հեռախոսով ահազանգելուց հետո 24-48 ժամակա ընթացքում:
- Օդակարգավորման, Օդափոխության և ջեռուցման համակարգի սարքավորումների ցանկը ներկայացված է հավելված 1.1- ում

• Վերանորոգումը իրականացվում է պատվիրատուի ահագանգը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում /1-ին զանգի դեպքում 20-ն օրացույցային օրվա ընթացքում/ . բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ:

- Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված վիճակում:
- Փոխարինվող պահեստամասերի համար սահմանվում է 1 տարրի երաշխիք:

*** Ծառայությունների մատուցման վայրերը՝**

- Բազրատաշենի մաքսային կետ Հայաստան, 4104, Տավուշի մարզ, Բազրատաշեն համայնք
- Բավրայի մաքսային կետ Հայաստան, 2802, Շիրակի մարզ, Բավրա համայնք
- Գոգավան-Պրիվիլյույեի մաքսային կետ Հայաստան, 2122, Լոռու մարզ, Գոգավան համայնք

Հավելված 1.1
Օդակարգավորման, Օդափոխության և ջեռուցման համակարգի սարքավորումների ցանկ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ.մ.	Քանակ
1.	Օդային վարագույր Arktos Classic KC-1500	հատ	3
2.	Օդային վարագույր Arktos Classic KC-2000	հատ	2
3.	Օդային վարագույր Arktos Classic KC-1506Y	հատ	5
4.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 160/3	հատ	1
5.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 200/5x2	հատ	1
6.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 250/3	հատ	4
7.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 250/9	հատ	1
8.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 200/6	հատ	1
9.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 200/5x2	հատ	1
10.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P15VCM-E	հատ	4
11.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P20VCM-E	հատ	2
12.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P32VCM-E	հատ	1
13.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P32VBM-E	հատ	7
14.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P40VBM-E	հատ	13

15.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P25VCM-E	հատ	1
16.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P40VCM-E	հատ	1
17.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P15VCM-E	հատ	1
18.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P20VCM-E	հատ	14
19.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P25VCM-E	հատ	2
20.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P32VCM-E	հատ	17
21.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric PLFY-P40VCM-E	հատ	3
22.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric SLZ-KA25VAL	հատ	5
23.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MXZ-5D102VA	հատ	1
24.	Տաքացուցիչ Mitsubishi Electric MAC-644BH-E	հատ	1
25.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-SF20VA	հատ	2
26.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MXZ-2D33VA	հատ	1
27.	Տաքացուցիչ Mitsubishi Electric MAC-643BH-E	հատ	1
28.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSC-GE20VB	հատ	1
29.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUH-GA20VB	հատ	1
30.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-EF25VES	հատ	4
31.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-EF35VES	հատ	4
32.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-EF42VES	հատ	8
33.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSC-GE20VB	հատ	6
34.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUH-GA20VB	հատ	6
35.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MXZ-3D54VA	հատ	6
36.	Տաքացուցիչ Mitsubishi Electric MAC-644BH-E	հատ	6
37.	Էլեկտրական օդատաքացուցիչ Frico CAT C3	հատ	2
38.	Էլեկտրական օդատաքացուցիչ Frico CAT C5	հատ	5
39.	Օդատաքացուցիչ LEO FB 20S	հատ	1
40.	Էլեկտրական օդատաքացուցիչ Frico CAT C3	հատ	1
41.	Էլեկտրական օդատաքացուցիչ Frico CAT C5	հատ	3
42.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUH-GA20VB	հատ	6
43.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUJ-HJ60VA	հատ	3
44.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSC-GE20VB	հատ	10
45.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-HJ60VA	հատ	3
46.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUH-GA20VB	հատ	4

47.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric PUHY-P250YKB-A1 (արտաքին բլոկ)	հատ	1
48.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric PUHY-P300YKB-A1 (արտաքին բլոկ)	հատ	1
49.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric PUHY-P350YKB-A1 (արտաքին բլոկ)	հատ	2
50.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric PUHY-P450YKB-A1 (արտաքին բլոկ)	հատ	1
51.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric PLFY-P25VCM-E2 (ներքին բլոկ)	հատ	3
52.	Ռեկուպերատոր Mitsubishi Electric LGH-100RVX-E	հատ	3
53.	Օդային վարագույր Frico PA3215CA	հատ	3
54.	Օդային վարագույր Frico PA2P15 / PA3PF15	հատ	5
55.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric MS/MU-GF50VA	հատ	1
56.	Օդակարգավորիչ Mitsubishi Electric MSZ/MUZ-SF50VE	հատ	3
57.	Ռեկուպերատոր Mitsubishi Electric LOSSNAY VL-100EU5-E	հատ	3
58.	Շրջանառու պոմպ Wilo Top-sd 32/7	հատ	1
59.	Շրջանառու պոմպ Yonos Pico 25/1-8	հատ	1
60.	Կաթսա Hermann Micra 2 23 E	հատ	3
61.	Կաթսա HERMAN Eura Top 24 SE	հատ	1
62.	Կաթսա HERMAN Thesi 24 SE	հատ	1
63.	Շրջանառու պոմպ Wilo Top-sd 32/7	հատ	1
64.	Շրջանառու պոմպ Yonos Pico 25/1-8	հատ	1
65.	Շրջանառու պոմպ Wilo Top-sd 32/7	հատ	2
66.	Մեկվոնտորանի կաթսա Schuster SWG R 32	հատ	7
67.	Շրջապտուտային պոմպ Wilo TOP-S 30/7, UPS 32-70	հատ	5
68.	Շրջանառու պոմպ Yonos Pico 25/1-8	հատ	2
69.	Շրջանառու պոմպ Wilo Top-sd 32/7	հատ	4
70.	Շրջանառու պոմպ Wilo Top-sd 30/5	հատ	2
71.	Արևային կոլեկտոր Superline L USB PU (2,3 m2)	հատ	3
72.	Ջեռուցման համակարգ	հատ	1
73.	Ծավալային ջրատաքացուցիչ	հատ	6
74.	Օդատաքացուցիչ LEO FB 20S	հատ	1
75.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 315/6x2	հատ	1
76.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 250/9	հատ	1
77.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 200/6	հատ	2
78.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-EF42VEB	հատ	1

79.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MS-GF60VA	հատ	4
80.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MU-GF60VA	հատ	4
81.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-EF42VEB	հատ	2
82.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUZ-EF42VE	հատ	3
83.	Օդային վարագույր Arktos Classic KC-1506Y	հատ	3
84.	Օդային վարագույր Arktos Classic KC-2009Y	հատ	2
85.	Տաքացուցիչ կանալային Arktos PBEC 355/6x2	հատ	1
86.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MS-GF50VA	հատ	1
87.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-SF42VE 1	հատ	1
88.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-GF60VE	հատ	1
89.	Օդակարգավորիչ ներք. բլոկ Mitsubishi Electric MSZ-GF71VE	հատ	1
90.	Օդակարգավորիչ արտ. բլոկ Mitsubishi Electric MUGF50VA	հատ	1
